ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 156 – Ա

08 մայիսի 2019 թ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 31-րդ կետի 1-ին կետի պահանջներով

կարգադրում եմ՝

1.«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության «Կենսաբանություն» առարկայի ուսուցչուհի Վարդուհի Հարությունյանի՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին ուղղված և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան վերահասցեագրված 2019 թվական ապրիլի 26-ի 03/23/7049-19 դիմումում բերված փաստերը ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Սաֆարյան Համբարձում- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ, նախագահ

Սարգսյան Նելսոն – Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ

Գևորգյան Գևորգ - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Հովհաննիսյան Բուրմունք –Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

Կյուրեղյան Միեր- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին (նախագահ՝ Համբարձում Սաֆարյան)՝ ուսումնասիրության արդյունքները մինչև 2019 թվականի մայիսի 13-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին, պատասխանել դիմողին և տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

08.05.2019

ՄԱՐԶՊԵՏ
ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Գնել Սանոսյան
GNEL SANOSYAN GNEL 1710830069

ք. Գավառ